

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

էջ

Հ. Մ. Տ. - Մի խմբի մանկան Միտրանի մանկան հիմնադրամի 250-ամակը . . . . . 289

ԳՐԱԿԱՆ

Հ. Մ. Տ. ՆԱԽԱԶԱՆՆԱՆ. - Հ. Ղևոնդ Ալիշան (իր մահուան յիշատակը) . . . . . 293

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ. - Աստվածներ - Լուսիններ - Ազատության ընկալություն - Մոսկովի վանքի լուսնային անցյալը - Կարոտ - Երկար պանդուխտություն (Թրգմ. Հ. Վահան Յովհաննիսյանի) . . . . . 296-305

Տերթ. Պ. ՄԻՍԱԿԻԱՆ. - Նորեկանների բարոյագրական անակադարձ և անոր ակունքը (Հարմ.) 306

ԱՐՄԵՆ ԵՐԿԱՐ. - Հայություն . . . . . 316

Շիրա . . . . . 331

Եղիշտականը. Նուրում - Ուղիղ - Բուստ . . . . . 331-332

Հ. Ղևոնդ ԱԼԻՇԱՆ. - Ս. Ղևոնդ Երեմյանի վանքի գրքեր (Թրգմ. Հ. Վահանյանի) 325

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԵՐ ԵՐԿԱՐ. - 15-րդ դարի մի գրչագիր աշխատանք . . . . . 310

17-րդ դարի մի գրչագիր աշխատանք . . . . . 313

ՊԵՐՏ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. - Ուրուգվեյի Հայ դրամատիկական պատմության . . . . . 317

ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ

Prof. Vahan Totomianz. - La cooperazione è fiorita dal Vangelo . . . . . 330

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳՐԱՆԳ

Հ. Ե. ՓԵՏԿԵԱՆ. - Գեղ. Հ. Կարապետ Թ. Ն. Վ. Ամասունի Առաջնորդ Ֆրանսայի Հայ Կաթոլիկ Հասարակության . . . . . 333

ԽՄԲ - Փաստաբանուհի Օր. Հեմա Կերակոսյան . . . . . 335

ՄՈՋԱԳՐԱԿԱՆ

Հ. Ն. Տ. Ն. - Հայկական հոգևոր Հ. Փիլիպպոս Վրդ. Երանկերանի . . . . . 336

ARTICLE DE FOND

PAGE

P. M. Dj. - Le 250me anniversaire de la Fondation de la Congrégation Mékhitariste . . . . . 289

LITTÉRATURE

P. M. Djanachian. - Le P. L. Alishan (à l'occasion de 50me anniversaire de sa mort . . . . . 293

P. Leonce Alishan. - Poésies de P. Alishan, traduites en arménien moderne par le Rév. P. Vahan Hovhannessian: Au ruisseau - La lune - Le noyer de la ferme - Oublie tes douleurs comme les vagues qui passent - Nostalgie - Longue pèlerinage . . . . . 296-305

Dr. B. Missakian. - L'aspect morale de Naregh (suite) . . . . . 306

Arsène-Yergath. - Esprit arménien (poésie) 316

Shtora . . . . . 331

Don - Le guerrier - Corail . . . . . 331-332

P. L. Alishan. - St. Léonce, prêtre de Vanante (trad. par le Rév. P. Chérubin Tchrakian) . . . . . 325

PHILOLOGIE

Aram Yéréman. - Le manuscrit d'un Evangile de 15me siècle . . . . . 310

Le manuscrit d'un Evangile de 17me siècle . . . . . 313

Berdy M. Garabédian. - Aperçu historique de la numismatique arménienne . . . . . 317

SOCIOLOGIE

Prof. Vahan Totomianz. - La coopération est fleurie de l'Evangile . . . . . 330

ECHO ARMÉNIEN

P. E. Petchikian. - Mgr. Garabed Amadouni, Supérieure de la Communauté arménienne catholique de France . . . . . 333

Réd. - L'avocate Mlle Gemma Guiragossian 335

NECROLOGIE

P. N. D. N. - † La mort du Rév. P. Philippe Yadiguarian . . . . . 336

ԲԱՋՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843 - 1951  
109-րդ ՏԱՐԻ



ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ  
ԹԻՒ 11-12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 250-ԱՄԵԱԿԸ



Ուրիշ է դեռ յիշատակը այն շքեղ տոնախմբաբանությունը, որ Ս. Հազար կազմակերպեց անցեալ տարի ազգային ու միջազգային բնոյթով՝ Երեւ. Հիմնադրիւ առ Աստուած փոխան 200-ամեայ յոբելանին առիթով:

Ծնողն ու ճնշողը, հիմնադիրն ու հիմնադրեալ գործը՝ գաղափարային գոգորդութեամբ իրարմե անբաժանելի՝ արդէն եղան առարկայ հիացումի ու գնահատանքի անկեղծ ցոյցերուն, որ Սղբն համանգամայն, Եկեղեցոյ Սրբազան Պետր, եկեղեցական ու քաղաքական իշխանու-

րիւններ, մշակութային կեդրոններն արեւմուտքի, անկերպական արտագեղութեամբ մատուցին:

Ու այսօր Միաբանութեան հիմնադրութեան 250-ամեայ յոբելանին, պատմական ուրիշ բռնականի մը սխրալի յիշատակն է, որ Սեպտեմբեր 8-ի նշիրականութեամբը ալ աւելի սիրելի և ուխտական, կը գրաւէ մեր ուշը, մեր սիրտը ու կը դառնայ առարկայ խորհրդածոյրներուն:

Ս. Հազարու աշակերտներէն մէկն է տօնը հարիւրամեակներ միայն իր Հաստատութեան զանազան պարգաններուն: Քաւներորդ դարու ա-

մին վրայ Ս. Ղազար տօնեց երկու-  
հարիշրամեան իր հիմնարկութեան.  
250-ամեան աշակերտ հանգրոցան  
մ'է, որուն շնորհ ազգային մարմնը  
անդրադարձաւ արդէն.

\* \* \*

Յետադարձ ակնարկ մը այն մշակ-  
ութեան, երբ ճնշու Սեմն Մխիթարի  
գործը, անտարածոյս պիտի պարզե-  
անգամ մ'աշ մտքի և սրտի այն  
գերազանց առաւելութիւնները, որով  
օժտուած էր Երևը. Հիմնադիրը. Հիմ-  
նարկումը որ և է գործի, որ և է ձեռ-  
նարկի՝ յիշեալ յայտանիշ է մտա-  
ւոր բացառիկ կարողութեան մը ան-  
հատի մէջ, որ զայն իրագործելու  
գաղափարը կ'ոռնենայ. Ոչ գաղա-  
փարը՝ որ նախ ճնշուց կ'առնէ մտքի  
ակօսներուն վրայ, - և ապա չերմա-  
նալով ձառագայքներուն տակ այն  
հզօր լոյսին՝ որ կը կոչուի իմացա-  
կանութիւն, տաղանդ կամ հանձար,  
կ'արձակէ ճիշեր, կը բողբոջի, կ'առնէ  
մարմինն ու կենդանութիւն, - ամենէն  
գեղեցիկ ճնշուցն է մարդկային ստեղ-  
ծագործութեան կեանքին մէջ. Հրաշա-  
գործութիւն մըն է արդէն ամեն գա-  
ղափարական, որ լոյսի պէս կը հնայէ,  
կը սիրունի ու կը սրտադրէ սրան-  
չացում իր շնորհ:

Երբ Մխիթար, քսաներեքից տա-  
րեկան երիտասարդ, խմբած իր շնորհը

աշակերտներ, Պորտոյ ժողովրդական  
տուններէն մէկուն մէջ, 1701 Մեպտեմ-  
բեր 8-ին իրիկունը, աղօտանշող  
կանքերի մը պղպարսկութեամբ խոր-  
հրդաւորութեան մէջ, կը պարզէր  
իրեններուն՝ ճրագիրը իր մտքի մեծ  
ճնշուցին, այդ օրը հայ երկնակա-  
մարին վրայ կը ճնշուէր Մխիթարեան  
գաղափարականին արեւը. Բնական  
է մարդկային մտքին յարիշ լոյսին,  
փարիշ ձլմարտութեան, սիրելի ինչ որ  
գեղեցիկ է, ինչ որ վեհ ու ազնուական,  
ինչ որ քերական է մարդկեղէն  
տկարութիւններէն վեր բարձրացող  
արժանաւոր իմաստութեան մը սրաց-  
ներէն. Այդպէս է գաղափարին դի-  
րանքը մտքերուն համար. Եւ արդարեւ  
անդրանիկ աշակերտները Մխիթա-  
րին, տեսան անոր մէջ գերազանց բան  
մը, սիրեցին զինքը, սիրեցին իր գա-  
ղափարականը.

Ոչ կեանքը սկսաւ ճրագրին ցոյց  
տուած ուղեգծով, Ս. Կոնստին աջովը  
մատնանշուած, երկնային հովանաւո-  
րութեան մը ապահովութեամբ արի-  
ւոյն ու զօրացած. Բայց այդ կեան-  
քը չեղաւ անդորր ու անվրդով. եղաւ  
բնականաբար իր իրաւունքով իր գիշեր մը  
յաճախ, որ կը մթագներ անոյնիսկ  
մտքերը, ու ամբողջով սրտերը՝ կը  
փռուէր զինքունը դէպի փառապանծ  
գաղափարականը. Մեծ մարդերուն

կեանքին գիճն էր այդ. տառապանքի,  
սրտաքեղումներու անդառնանէն քա-  
ղել վարդեր յոյսի և գեղեցկութեան,  
ու իսաւարէն ստեղծել ձառագայքներ  
լոյսի. Երբ մայրախումբ Ս. Կոյ-  
սին անպակաս էր Մխիթարի բոլոր  
ձեռնարկներուն վերեւ, անոյն չարա-  
դէտ աչքը Սատանին չէր յոգներ յա-  
րոցանելէ խոչընդոտներ՝ քանդելու  
ինչ որ ան կը խորհէր կանգնել. Աս-  
տուածային տեսչութեան գաղտնիք մը  
անշուշտ ստիպաւ, որ կը յայտնուի  
բոլոր սուրբերուն կեանքին մէջ, որ-  
պէսզի սրբակերտունի, մաքրագոր-  
ծուն հոգիները իրենց բռնիքին մէջ,  
իրենց ձեռնարկին մեծութեան մէջ.  
Մխիթար անցաւ վշտերուն այդ բով-  
քէն, ու հասաւ Աստուծոյ գիրկը.  
Այլեւս Աստուծոյ մարդն էր, այն մեծ  
ու բացառիկ դէպքէն մին՝ որ ազ-  
գերուն պատմութեան քառորդի վրայ  
կ'երեւին, և զոր Նա կը ստեղծէ մատը  
դնելով ձակտին, ըստ ժողովրդական  
բացատրութեան. Անմահութեան կնի-  
քովը դրոշմուած, Մխիթար նախա-  
սահմանուած էր առաջնորդելու իր  
ազգը դէպի հոգեկան ազատութիւնը,  
դէպի մտաւորական գեղեցկութիւննե-  
րուն բարձունքը:

Մեպտեմբեր 8-ը նշխարական էր  
արձանագրած է Մխիթարեան Միա-  
բանութեան տարեգրութիւններուն մէջ.  
Պոլիս, Մերոն, Վիեննայի, անցողակի

կամ մնայուն կայաններ Մխիթարի  
նորերուն, հրաշագործութեան են Կոնս-  
տան ձեռքի մը լուսաւաճանչ շնորհ-  
ներով. Հիմնարկում, յաղթանակներ  
կային չարահմար մեքենայութիւննե-  
րուն դէմ՝ որ կը խոչընդոտէր զինքը  
և իր գործը, մոռնալով Ս. Ղազարուն  
կողմէն, կատարուած զարմանահրաշ  
գործակարութիւններով ձիւղտ այդ  
տուններէն հսկողութեան, որ կանգ-  
նած էր Մխիթարի գլխուն վերեւ:

\* \* \*

Թէ ինչ է նշանակութիւնը Միաբա-  
նութեան ազգին համար, այլեւս հան-  
րաճանօթ հասարակաց տեղիքներ են,  
և զոր կրկնելը կամ փաստելը ման-  
րամանօրէն՝ աւելորդ կը համարուի  
բոլորովին. Այն բնականին, սակայն,  
երբ Մխիթար հիմը դրաւ իր գաղա-  
փարականին, մեքենայական մ'էր Հա-  
յաստան, իր հոգեկան, ազգային,  
մշակութային բոլոր երեւոյթներուն  
մէջ. Վերաճնուց մը եկաւ իրմով  
փրկելու մեզ այդ սահաւոր կացութե-  
նէն, զոր ՏԳԻՄԱԹԻՆ և անկում  
եղբերով սովորութիւն եղած է որակել  
այլեւս. Լոյս ու գիտակցութիւն էր,  
նշխար, զոր կը բերէր Մխիթար իրեն  
հետ. Հոգեկան ու իմացական աշխարհ  
մը պիտի կերտէր այդ լոյսով և գի-  
տակցութեամբ:

